

ՀԸՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԸՅ ԲԵՐԸ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԻ ՄԱՍԻՆ

- Ա -

Իսկ երբ լրացավ պատ պահելու տրված ժամանակը, երանելի Գրիգորը առավ աշխարհաքանակ գորքը և իրեն՝ թագավորին, մրա տիկին Աշխենից, մեծ օրհորդ, Խոսրովիդուխտին, ամենայն մեծամեծերին և քանակի բոլոր մարդկանց, առավոտյան այգը լուսամալում պես, Եփրատ գետի ափը տարավ և այնտեղ մկրտեց առհասարակ ամենքին՝ համում Հոր և Որդու և Սուրբ Հոգու:

Երբ բոլոր մարդիկ ու թագավորը իջնում էին այնտեղ՝ Եփրատ գետի ջրերի մեջ մկրտվելու, Աստծուց սքանչելի հրաշք երևաց, քանզի գետի ջրերը կանգնելով ետ դարձան: Սաստիկ լույս երևաց լուսավոր պան մման, և կանգնեց ջրերի վրա տերունական խաչի կերպարանքը, և լույսն այնքան ծագեց, մինչև որ արգելեց ու մկազեցրեց արեգակի ճառագայթները: Օծուխյան յուղը, որ Գրիգորը մարդկանց վրա էր թափում, գետի մեջ ջրջան կատարելով՝ մարդկանց շուրջն էր պտտվում: Ամենքը զարմացած օրհնություն էին տալիս ի փառս Աստուծո: Նույն օրը երկոյան հրաշքը ամերևույթ եղավ, և մրանք դեպի վեր՝ ավան վերադարձան: Նրանք, որ այն օրը մկրտվեցին, ավելի քան տասնհինգ քյուր էին, արքունական գորքից:

Ազարանգեղոս (ե դ.), «Հայոց պատմություն», 8 832, 833:

- Բ -

Ապա այն արդար քաներից և ճշմարիտ գործերից հետո, որոնք կատարվեցին մրանց ձեռքով, իրավունք վերապահեցին այս ևս, այն է՝ իրենց հայրապետից հայեղ՝ օրհնելու օծության յուղը, այսինքն՝ Մյուտոնը, և տալ մրանց, որպեսզի բոլոր ուղղափառ հավատացյալներն օծվեն և լուսավորվեն սուրբ Ավագամի միջոցով՝ ջրի և /Սուրբ/ Հոգու գործակցությամբ: Քանզի Մովսեսի մահից /607/ հետո երբեք չէր օրհնվել օծության յուղը, և մրանից օրհնվածը քաշխված էր Աթոռի Տեղապահ Վրթամեսի /միջոցով/: Եվ այս էր, որ պատրաստի ունենալով կիրառվում էր, որովհետև եպիսկոպոսների առաջին ժողովից մինչև երրորդ ժողովը՝ Վրթամեսը եկեղեցու պաշտոնյաների հետ միասին ամիսներ և օրեր շարունակ օգտագործում էր յուղագործների արհեստի համաձայն պատրաստված օծության յուղը:

Այնուհետև սուրբ հայրերը հայրապետից խնդրեցին այն հոգևոր գործը ևս իրականացանել և միասին գլխավորել, քանի դեռ չէին ցրվել, և ըստ օրվա խորհրդի, սաղմոսներով, օրհնությամբ, հոգևոր երգերով և ըմբերցումներով մտնելով գիշերային պաշտոնի մեջ, համաձայն խորհրդի, պատշաճ կերպով գիշերն անցկացրին Աստծուն /ուղղված/ աղոթքների մեջ և ամբողջ ցերեկը տքնեցին այնքան, մինչև քովանդակ խորհուրդն ավարտվեց ի փաստ Աստծո: Ապա մյուս օրը հայրապետը բոլորին բաշխում է օրհնության յուղը: Օրհնելով նրանց և օրհնվելով նրանցից, իրար ողջույն տալով՝ խնդությամբ և խաղաղությամբ յուրաքանչյուրը ցրվեց իր վիճակը:

Սուրբ յուղի օրհնության մասին, որ օրհնեց Արքայապետը /607 թ.

մայիսի 7-ին/ եպիսկոպոսների խնդրանքով, ովքեր հավաքված էին նրա մոտ

Տե՛ս Ուխտանես եպիսկոպոս (մոտ 935-1000), «Պատմություն Հայոց», Բ,

գլ. ԼԹ

- Գ -

/...../ Իսկ ի՞նչ եմ քահանայական խոսք ու ձեռք կոչում. այն, ինչ Սուրբ Հոգու մոլուց առհավատչյալն է, նաև վստահեցնում ոմանց՝ մերձեմալ և ապավինել իբրև բարձրագույն և աստվածաբանակ նյութերի: Ես սուրբ յուղի հեղման մասին եմ ասում, որով, նախկինում, աստվածային հոգին անցնում էր քահանաներին և թագավորներին, ներգործում նրանց վրա: Եվ ամենուրեք բոլորի մեջ էլ այս յուղով պարգևաբաշխ Հոգին գտնում է իր կատարյալ խորհուրդը: Ընդհատ այնպես, ինչպես մեր մարդկային բնությունն է երկու տեսակ. այդպես էլ երկպատիկ ու նորոգող Սուրբ Հոգին է մերձեցնում մեզ. նյութականությամբ զվարճացնում է զգայականը, քանի որ «Յուղը,- ասում է մարգարեն,- զվարթացնում է» /ՍԱՂՄ. ԾԳ. 15/, իսկ իր գործությամբ զորացնում է մեր հոգեկանը. «Հրամայիր,- ասում է,- Աստված քո գործությամբ՝ զորացնել այն, ինչ հաստատեցիր մեր մեջ» /ՍԱՂՄ. ԿԷ. 29/: Եվ որպեսզի որևէ մեկին կասկածելի չթվա իր գործի իրողությունը, սկզբից մարմնավոր տեսքով եկավ հանգչելու իր ազգակցի վրա՝ կամենալով այդպես երևալով աշխարհին առհավատչյալ լինել իր աներևույթ գալստյան համար, իսկ աշխարհը չկամեցավ այքի տեսածը դարձնել սրտի տեսողության ճանապարհ: Սա հենց այն է, ինչ Տերն ասում էր, թե՛ «Աշխարհը չի կարող ընդունել նրան, որովհետև չի տեսնում և չի ճանաչում նրան, բայց դուք տեսնում եք, որովհետև ձեր մոտ է բնակվում» /ՀՈՎՀ. ԺԴ. 17/:

Այդպես էլ, առավասիկ, մենք՝ առաքյալների խոսքով Ամենասուրբ Երրորդության հավատացյալներս, ընդունում ենք, որ փրկագործության միջոցները՝ եկեղեցիները, սեղանները, խաչերը, պատկերները օծված են յուղով, և հավատում ենք, որ նրա /յուղի/ հետ այդ միջոցներին է անցել աստվածային գործությունը /...../:

Հովհան Օձնեցի, (ՄԵ. թ. անհտ. - 728, կաթողիկոս 717-728), «Ընդուն պավիկյանների»

- Դ -

/.../ Բայց երբ օրհնում ենք խաչը և վրան ջուր ու զիճի ենք հեղում, ոչ թե քարն ու փայտը դարձնում ենք արքայության որդիներ, այլ Քրիստոսի խաչի օրհնակն ենք դրոշմում նրանց վրա /.../:

Եվ ինչո՞ւ է քեզ անարժան թվում Մյուտունը մերձեցնել խաչին. քանզի Քրիստոս /ինքը/ խաչին բնավեց և /այդ/ անարժան չհամարվեց, այլ սրբեց այն

և տվեց Քավատացյալներին որպես պահապան, ապա ի՞նչ վճաս քան կա, եթե Մյուտոնը մոտեցնե՞մք խաչին: /...../

Տեր Գեորգ Հայոց Քայրապետի (ՏՃ. թ. անհտ. - 897, կաթողիկոս 877-897) և հոգեշնորհ փիլիսոփայի պատասխան թուղթը ասորիների պատրիարք Հովհաննեսին

- Ե -

/...../ Երբ եկավ մեր Տիրոջ մկրտության տոնը, կայսրը /Վասիլ Ա/ պատիվ արեց տեր Պետրոսին ու Քայոց վարդապետին, հուճաց կղերականներից բարձր դասեց նրանց և հե՞նց տեր Պետրոսին առաջարկեց առաջինը օրհնել ջուրը: Երբ Պետրոսը սուրբ Մյուտոնի ձեթը կաթեցրեց ջրի մեջ և Սուրբ խաչի նշանով խփեց ջրին, ջրի վրա սաստկափայլ կրակ երևաց, գետը մի տեղ կանգ առավ և չէր հոսում: Կայսրը և զինվորները, տեսնելով դա, սարսափեցին: Կայսրը խոճարկվեց, և տեր Պետրոսն իր աջով նրա գլխին օրհնելու ջուր թափեց /...../:

Մատթեոս Ռոհայեցի (ԺԱ դ. 2-րդ կես - մոտ 1144), «Ժամանակագրություն», մասն Ա

- Ջ -

/.../ Իսկ երբ ընդունողների /Քավատացյալների/ տկարության պատճառով Հոգու տեսանելի ջնորհները նվազեցին, հե՞նց նույն Հոգուց շարժված գեղեցկապես հիմնակարգեցին, որպեսզի ընթերցվեն հոգեկիր մարգարեների, Առաքյալների և ավետարանիչների խոսքերը ստեղծված խաչի դիմաց /.../ և խաչի վրա կողափոս քիսման նմանությամբ խաչը լվան ջրով և զինով և, որպես Հոգու սրբության օժություն, այն դրոշմեն Մյուտոնով /.../:

Եվ եթե հակառակորդներից մեկն ընդդիմաբանի Մյուտոնի օժան կապակցությամբ՝ իբր թե այն ավելորդ ու անտեղի է, այս մասին կասենք, որ Մյուտոնն ու՞մի Սուրբ Հոգու զորության խորհուրդը: Եվ եթե Հորմ ու Սուրբ Հոգուն էակից ամենայն ինչի ամկարոտ մարմնացյալ Բամն անպատշաճ չհամարեց կամ նվաստություն /չնկատեց/ Սուրբ Հոգու՝ աղավնու կերպարանքով իր իսկ վրա իջեցնելը Հորդանանում, այլ նույն հոգով կենցաղավարեց անպատում /.../, ապա որքան պատշաճ է մեզ սոսկական նյութը, որ վերցնում ենք նյութական քաններից, օձել նույն իմաստով, որպեսզի նույն Հոգու զորությունն առնի:

Ներսես Օճորհադի (մոտ 1100-1179, կաթողիկոս 1166-1179), «Նամակ՝ հղված Միշագեռքի ասորիներին՝ Ամայք նահանգի բնակիչներին»

- Է -

Երբ նրան /Թադեոս առաքյալին - Հ. Ք./ վիճակվեց Հայաստան աշխարհը, տրտմեց և ասաց. Այդ երկիրը ցուրտ է և մարդիկ՝ քիտո: Եվ ասացին. Մի ընդդիմացիր /Սուրբ/ Հոգուն: Եվ նրան տվեցին օժան յուղը, որ օրհնել էր Քրիստոս, և զեղարդը: Եվ ուրիշ ազգեր չունեն այս պարծանքը՝ մեր մեռոնը, որ համապագ և միշտ նույն ջնորհն ու՞մի:

Վանական վարդապետ (1181-1251), «Գովեստ հայ ազգի»:

- Ը -

Նա, ով պատճառ բռնելով ասում է, թե Հայոց Մեռոնը անկատար է և դրա համար անպատվում այն, շատ ստություն ու՞մի: Մի՞նչդեռ իրենց Մեռոնը շատ են

պատվում (ասելով), թե մրա մեջ բախասանի ձեռք և այլ անուշաֆոտ մյուսեր եմ խառնված խումկի հետ: Եվ կանոնակարգում եմ Մեռոնը պատրաստել խառնուրդով, ինչպես Պատարագի սուրբ հացի մեջ խմոր (եմ խառնում) և (հաղորդության) բաժակի մեջ՝ ջուր: Եվ գրված չէ, թե ձիթապտղի ձեռքն է անհրաժեշտ օրհնել, որովհետև գավառներում ձիթապտղի ինչ ձեռք պատահի, այն է ընդունելի. թե՛ շուշմայի և թե՛ ուրիշ տեսակների:

Աստված Մովսեսին հրամայեց խակակույթ ձիթապտղի յուղ պատրաստել՝ համաձայն տվյալ գավառում եղածի: Բայց ինչպես Պատարագի հացն է օրհնությունն ստանալով դառնում Քրիստոսի մարմին, նույնպես ձեռքն է օրհնությունն ստանում որպես Հոգու նշանակ, քանզի Սուրբ Հոգին է, որ օրհնում է. և սրա առհավատչյան թե՛ Պատարագի և թե՛ Մեռոնի անուշաֆոտ լինելն է:

Եվ եթե մեկն օրեմը Վկայակոչի՝ ասելով, թե չորս (տեսակ) անուշաֆոտ խումկ խառնեցին օծությանն յուղի մեջ, [կանեց], քայց այն վայել էր Օրհնակին, և Մշմարտությանը հարկավոր չէ մնամ խառնուրդ, քանզի այնտեղ ամենայն ինչ մարմնավոր է և այստեղ՝ հոգևոր (...)

Մխիթար Գոշ (մահ. 1213), «Հավատքի ուղղատիառության մասին»

- Թ -

[...] Նույն օրը երկու օտարականներ եկան ինձ մոտ և երկու տեսիլք պատմեցին: Մեկն ասում էր. Աղեղի մնամ մի կամար արևելքից դուրս գալով, հասավ արևմուտք և հյուսիսից՝ հարավ, և թովանդակ աշխարհը լուսավորելով պայծառացավ: Եվ ձայն լսվեց, որ սկիզբը եղավ ազգիս նորոգմամբ: Եվ մյուսն ասում էր, թե՛ Էջմիածնի բեմին էիր նստել և գոգո լեցում էր վարդով, և հայոց ամբողջ ազգը եկավ, վարդ վերցրեց և վարդը չպակասեց: Եվ ես ասում եմ, թե այն նշմարիտ Մեռոնն էր, որ տարածվում է մեր թովանդակ ազգի մեջ [...]:

Եվ հասանք սուրբ Պենտեկոստեին՝ առաքյալների վրա Սուրբ Հոգու գալստյան և իջման օրվան, և, մեծահանդես ժողով կատարելով, օրհնեցինք աստվածագործ Մեռոնը և բաժանեցինք թորգոմյան թովանդակ ազգիս մեջ, և կանոնակարգեցինք ձրի տալ և ձրի առնել, համաձայն առաքելական գոյի մանության, որի մասին հրամանը Քրիստոսից ընդունեցինք [...]:

Թովմա Մենտկեցի /1978-1446/, Հիշատակարան

- Ժ -

1.../ Իսկ սուրբ Մյուտոնով օծվելը այն է ցույց տալիս, որ երբ Քրիստոս մկրտվեց, Սուրբ Հոգին իջավ մրա վրա, որպեսզի, իբրև մեր գլուխ, իր անդամների՝ հավատացյալների վրա հեղի /այն/ իբրև ազնիվ յուղ, որ իջնում է Ահարոնի գլխին /ՍԱՂՄ. ՃԼԲ 2/: Այսպես էլ ջրով Քրիստոսի մեջ ենք մկրտվում և Աստծո որդիներ կոչվում և յուղով միավորվում ենք Սուրբ Հոգու շնորհներին: Եվ իմանալու է, որ ճակատի, սրտի, թիկնամեջի օծումը դրոշմ է /կոչվում/: Եվ այն, որ մեր հինգ զգայություններն է օծում, գաղտնորեն /ակնարկում/ է օծման խորհուրդը: 1.../

Եվ եթե մեկն ասի, թե պարտ է, որ քահանայի ձեռքը մոտենա զգայարաններին, կպատասխանենք, որ քահանայի ձեռքը հարածամ մոտենում է

քրիստոնյաների գլխին, որ արմատն է բոլոր զգայությունների: Եվ քահանայի ձեռքը օծված և սրբված է մյուտոնով և տալիս է սրբության շնորհ, ում մտտեմուս է /.../:

Եթե մեկն ասի, թե մկրտությունից առաջ եղած առաջին օծումը չունենք, կպատասխանենք, որ այդ ևս գաղտնորեն ունենք, ինչպես այն, որ ավագամի ջրի մեջ Սյուտոնը խառնվում է խաչի մասնությամբ նախ այս խորհրդի պատճառով: Երկրորդ՝ որովհետև մեր մկրտությունը ոչ թե Հովհաննեսի ջրի մեջ է, այլ՝ Քրիստոսի մահվան: Այդ պատճառով այլևայլ յուղ չենք օգտագործում, այլ՝ միայն սուրբ մյուտոն, որպեսզի քահանաները չհամարձակվեն ձեթօրհնեքը կրկին եկեղեցի մտցնել: Այլ Ավագ Հինգշաբթի ենք օրհնում յուղը, որպեսզի սուրբ մյուտոնը համբակների ոտքերին չմերձենա: Դարձյալ այս օծման խորհուրդը վերաբերում է մեջեջյալ քահանաներին, որովհետև մրանց օծում ենք իրեն ըմբիշներ, որպեսզի գտնեմարտեն օդի շար ոգիների դեմ:

Եվ եթե մեկն ասի, թե միայն մարմինն է օծվում, ինչպե՞ս է հոգու վրա մերգործում, կպատասխանենք. «Երբ միավորված էր մարմնի հետ՝ բոլոր մարմնավորները միությամբ էին մերգործում մրա վրա, իսկ այժմ, որ բաժանված է՝ բոլոր սրբությունները բաժան-բաժան են հասնում մրան /.../:

Եվ եթե մեկն ասի, թե դրոշմ չունենք, որովհետև եպիսկոպոսը չի տալիս, ինչպես ֆոնանկաց ազգը, կպատասխանենք, թե համաձայն հունաց ազգի՝ ինչպես քահանամ պատարագում և մկրտում է, այնպես էլ դրոշմում է, ըստ սուրբ Դիոնիսոսի, որ քահանայապետ է կոչում մրան, ով պատարագում, մկրտում և դրոշմում է /.../:

Դարձյալ ասենք, որ մեր քահանաները իշխանություն ունեն դրոշմելու, որ շնորհում է մրանց եպիսկոպոսը, ուրեմն իշխանակից են մեր քահանաները և մրանց եպիսկոպոսները /.../:

Գրիգոր Տաթևացի (1346-1409), «Քննող Եկեղեցու յոթ խորհուրդների մասին»

- ԺԱ -

/.../ Ամենափրկիչն ու ամենագթած մեր Բժիշկը՝ Քրիստոս, ավագակների ձեռքն ընկածի մասին իր առակախոսության մեջ երկու կարգի հարկավորագույն խորհուրդ ի հայտ բերեց՝ վերքերի վրա ձեթ և գինի հեղելով, որպեսզի դրանցով, այսինքն՝ գինով և ձեթով, բժշկի, այսինքն՝ մկրտությամբ, որ կատարվում է Մետոնի աստվածային յուղի միջոցով և իր կենդանադար արյամբ, որ գինու միջոցով եղավ մեր փրկության համար: Արդ, ամենատառ և գթասիրտ մեր Բժիշկը՝ Քրիստոս, մեզ ավանդեց մահ այլ զանազան և պես-պես կենդանադար խրատներ ու հորդորներ, տարբեր պատվիրաններ, փրկության, օգտակարության զանազան եղանակներ և ճանապարհներ, ինչպես մահ՝ Եկեղեցու յոթը շնորհները, որ ամբողջապես օգտակար, առողջարար, փրկագործ և կենդանացուցիչ են, սակայն այս երկուսը, այսինքն՝ մկրտությունն ու հաղորդությունը, բացառիկ են, որովհետև մեր բնության ամհրածեշտ, զոյացուցիչներն ու պահպանիչներն են, մեկը՝ ծնելով, և մյուսը՝ կենդանի պահելով. այս պատճառով Տերն այս երկուսը հարկադրական կանոնով և անեղծանելի կնիքով վճռեց, որ բոլորը ընդունեն և հաղորդվեն /.../:

Բայց այն հոգիները, որ մեկտեղված են մի վայրում առանց Աստծո, այսինքն՝ առանց մկրտության ու հաղորդության, չեն կարող փրկվել և ոչ էլ մույճիսկ քրիստոնյա դառնալ, որովհետև մեկը /մկրտությունը/ ծնունդ է, մյուսը /հաղորդությունը/ ծնվածի պահպանություն: Այս պատճառով առանց մեկ մեկու չեն լինում: Ըստ այդմ սուրբ Գիորգիոսը սուրբ հաղորդությունն ու սուրբ Մեռոնը համակարգ /հավասար/ է ամվանում, որովհետև իրարով են [գոյավորվում] և իրարով են սրբազնագործվում, քանզի Պատարագը չի սրբազնագործվում առանց Մեռոնի և ոչ էլ առանց Պատարգի՝ Մեռոնը: Ուստի ասում է. Քահանայապետության քոլոր սրբազնագործությունները Մեռոնով են կատարվում, ինչպես եկեղեցին, Սեղանը, խաչը, Քահանան, և բոլոր եկեղեցականները Մեռոնով են օծվում և սրբվում: Այս պատճառով և եկեղեցու բոլոր խորհուրդների մեջ մկրտությունն ու Մեռոնի օծումը մախադաս է՝ իրև դուր և ճանապարհ մյուս բոլորի: Ինչպես սուրբ Նարեկացին է ասում. Քահանայությունը չի կարող ձեռնարկել [մոտեմալ] անկոխելի տեղին, այսինքն՝ Սեղանի սրբազան խորհրդին մերձենալ, եթե Մեռոնի օծմամբ մկրագործված չէ: Մի ուրիշ տեղ սուրբն ասում է, թե՛ «Այս հոգեկիր Մեռոնը իրեն հավասար կամ ըմկեր չունի, քանզի բոլորից առավել է, այլ՝ միայն Աստվածային խաչից և Աստվածային Արյանդ հավասարությամբ գերապատիվ եղավ»: Ուրեմն, ինչպես առանց Քրիստոսի արյան և խաչի չկա փրկություն, մույճպես և առանց աստվածային այս Մեռոնի չկա հարություն և որդեգրություն Հայր Աստծուն: Ինչպես Հացի և Գինու խորհրդի միջոցով աներկբայորեն հավատում ենք, թե Քրիստոսի ճշմարիտ մարմինն ու արյունն ենք ճաշակում փրկության համար և սուրբ Ավագամի ջրի մեջ ծնվում իրև Աստծո որդիներ, այդպես էլ աստվածագործ Մեռոնի օծումով ստուգապես հավատում ենք, որ սրբագործ այս յուրի միջոցով Սուրբ Հոգին համզվում է մեր մեջ, ստանում հավիտենական կենդանություն և աստվածային որդեգրության կնիք, համաձայն Պողոսի, թե «Որդեգրության Սուրբ Հոգի ստացանք, որով աղաղակում ենք Աքքա՝ Հայր» /ՀՌՌՎՄ. Ը 15/:

Արդ, սկզբնապես այս յուրը կոչվում էր շնորհաբաշխ Մեռոն, որ ըստ բանաստեղծական մեկնաբանության ճշանակում է Մայր, որովհետև ինչպես մայրն է բնականորեն սիրում և խնամում իր որովայնի ծնունդը և գործվագութ ըղձամքով միշտ պահում և պահպանում ամեն տեսակ վնասակար արկածներից, մույճպես և այս սուրբ Մեռոնը հավատացյալներին և սուրբ Ավագամի շնորհիվ մկրտությամբ իրենից ծնվածներին սիրում, հոգևոր խանդաղատանք է տածում մրանց նկատմամբ և գործվագեղ ծնողական գթով պահպանում և փրկում է աներևույթ թշմամու ամեն տեսակ արկածներից: Համաձայն Նարեկացու, ինչպես խավարն է փախչում և հալածվում լուսից, ցավը՝ առողջությունից, մահը՝ կյանքից, և գիշերը՝ ցերեկից, այդպես էլ տիրապարզև յուրից իսպառ մերժվում և մեկուսանում են բոլոր չարությունները:

Դարձյալ այս սուրբ յուրը կոչվում է Մեռոն, այսինքն՝ մեռցնող, քանզի սուրբ Մեռոնի շնորհիվ սուրբ Ավագամի մկրտությունն ու ծնունդը՝ Քրիստոսի մահվան և Հարության խորհուրդն ունի: Որովհետև երեք անգամ ջրի մեջ ընկնվելը խորհրդանշում է Քրիստոսի երեքօրյա թաղումը, իսկ ջրից դուրս գալը՝ Հարությունը [...]:

Դարձյալ, այս սրբալույս յուրը կոչվում է Մեռոն, այսինքն՝ Մոայլ, մթին և խավար, քանզի աստվածային գրոց սովորությունն է աչքին և մտքին

անհասանելի և անըմբռնելի [իրերը] խավարով ու մթով նշանակել՝ անմատչելի լինելու պատճառով, ինչպես օրինակ՝ Աստծում, որ հատնակ լույս է և անմատչելի լույսի մեջ բնակվող [...]:

Դարձյալ աստվածաբառ այս յուրը կոչվում է Մեռոն, այսինքն՝ Մոայլ, մթին, իբրև անհիմնալի, անըմբռնելի լինելու պատճառով խավարի, մոայլի մեջ ծածկված /իրողություն/, ըստ Նարեկացու, որ ասում է. Որովհետև այս իրողությունն հավետ անքննելի է, քան բոլոր սրբությունների սրբությունները:

Դարձյալ, այս սուրբ յուրը կոչվում է լույս կամ սրբալույս, սրբող և Աստծո նման լուսավորող /.../: Այս պատճառով Մեռոնը կոչվում է սուրբ և լույս, իբրև Արարիչ Աստծո պատկերակից: Արդ, ինչպես Աստված և արեգակը իրենց լույսը մշտապես տարածում են արարածների վրա և բոլորին անխտիր լուսավորում, նմանապես և այս սրբալույս Մեռոնը աստվածային շնորհների լույսը միշտ և առատորեն արձակում է հավատացյալների հոգիների մեջ և լուսավորում բոլորի հոգիները և սրբում մեղքերից /.../:

ԱՆԱՆՈՒՆ /ԺԵ դարից առաջ/, Քարոզ սրբալույս Մեռոնի մասին. ըստ այն խոսքի, թե՛ «Եթե մեկը վերստին չճնկի հոգույ և ջրով» /ՀՈՎՀ. Գ 3/

- ԺԲ -

Վերցրու անուշափոտ համեմունքներ. զմռնեմու հինգ հարյուր սիկղ ընտիր ծաղիկներ, դրա կեսի չափ՝ երկու հարյուր հիսուն սիկղ անուշաբույր, կիճամոն, երկու հարյուր հիսուն սիկղ անուշաբույր խնկեղեգ, հինգ հարյուր սիկղ սրբաբանի հիրիկ և ձիթապտղի ջուրը վեց լիտր ձեթ: Դրանցից մեկը կպատրաստես սուրբ օծության համար յուղ այնպես, ինչպես վարպետ յուղագործները ձեթ են պատրաստում: Այն սուրբ օծության համար յուղ թող լինի /ԵԼԲ Լ 23-25/:

Հինգ նյութից գոյացած յուրը, համաձայն կարգի, /նշանակն է/ նախկին հայրերի արդարության: Աբելը՝ զմռնեմու ծաղիկն է. նրա ծաղկածն արյունը հեղվեց: Անուշ կիճամոնը օրինակ է Ենովքի զգոն վարքի: Կիճամոնի համար ասում են. թե մեկը խոր քնի մեջ լինի /որ նման է մեր բնության թանձրության հետևանքով առաջացած մեղքի թմրությամբ/՝ նրան խոսել է տալիս արթուն ժամանակվա նման և հարցերին պատասխանել է տալիս, ինչպես Ենովքը: Այն նաև իջեցնում է տաքությունը, որ տապոտ հնոցի՝ բանասարկուի /սատանայի/ նման /մեղքի/ տաքությունն է ներարկում հոգու և մարմնի մեջ: Ողջախոհ Ենովքը բանասարկուի այս խորհուրդները վաճում է մտքից, նաև՝ հեշտասիրության ցանկությունը: /Ենովքը/ մարմնի մեջ նմանվեց երկնքի հրեշտակներին, որոնք չունեն արյան և մարմնի ջերմոտում:

Եղեգի խունկը նշանակն է Նոյի անուշակ արդարության, որ հոտոտելով Տեր Աստված վկայեց նրան և ասաց. «Մարդկային՝ ցեղի մեջ քեզ տեսա արդար» /ԾՆՆԿ. Է 1/: Հինգ հարյուր սիկղ հիրիկը Աբրահամի հավատքի նշանակն է և հինգ զգայությունների շարժումների: Իսկ ձիթեմու յուրը օրինակն է Մովսեսի օրենսդրության, որովհետև ինչպես լույսի ճառագայթն ըստինքյան ձեթը դարձնում է գիշերվա վամիչ, այդպես էլ նրա օրենսդրությունը կոապաշտության խավարից Իսրայելի որդիներին տարավ դեպի լույս, համաձայն այն խոսքի, թե՛ «Բո պատվիրանը ճրագ է, լույս և կյանք» /ԱՌԱԿ. Զ 23/:

Բայց ճաճանչալոր ճրագը կարապետն /Հովհաննես Մկրտիչն/ է, որ եկավ օծության յուղով, որովհետև Մովսեսից սկսվեց, որով օժվեցին Ահարոնը, և նրա

որդիները լուսատու ձեթով եկամ դեպ քահանայություն և թագավորություն մինչև Հովհաննես, քանզի ինչպես խառնված /շնորհները/ համաձայն յուրաքանչյուր անվան յուղի անվամբ են արտահայտվում, նույնպես և Մովսեսի ու Ահարոնի կողմից բոլոր օծվածներն իբրև օրինակ արտահայտվում են անշառավիղ Հովհաննեսի մեջ:

Հնեի մասին՝ այսքան, իսկ նորերից գլխավորը մեր Տեր Հիսուս Քրիստոսն է. իր արյամբ /խորհրդանշելով/ Աթելի ծաղկաձև /արյունը/, վարքով՝ Ենովքի գգոն /վարքը/, /արդարությամբ/՝ իբրև ամուշ խունկ Նոյի արդարությունը, որով լցվեց քովանդակ տիեզերքը: Հիրիկը Աբրահամի հավատքն է Տիրոջ նկատմամբ, ըստ այսմ, բոլորս արդարանում ենք հավատքով, համաձայն այն խոսքի, թե՛ «Եվ մենք արդարանում ենք Քրիստոսի հավատքով» /ԳԱՂԱՏ. Բ 16/: Իսկ օծության յուղը օրենքի լուսատու ճրագն է, ըստ Մովսեսի, Ահարոնի և Հովհաննես Մկրտչի մարգարեության, քահանայության և թագավորության, որովհետև սրանք օծյալ են: Եվ սրանք ըստիցյան գլխավորեց Քրիստոս, որ թարգմանվում է Օծյալ, Մարգարե, համաձայն այն խոսքի, թե՛ «Տեր Աստված ձեր եղբայրների միջից ինձ նման մարգարե պիտի հանի ձեզ համար» /ԳՈՐԾՔ Գ 22/ և թագավոր՝ համաձայն այն բանի, թե՛ «Իսկ մեր Աստված հավիտենական թագավոր է» /ԵՐԵՄԻԱ Ժ 10/ և Քահանա, ըստ այն խոսքի, թե՛ «Քրիստոս եկավ որպես հավիտենական Քահանայապետ» /ԵԲՐ. Թ 11/:

Նրան փա՛րց հավիտյանս. ամեն:

Անանուն, [Օծության յուղի մասին]

- ԺԳ -

Այն յուղը, որով ճնում օծվում էին քահանաներն ու թագավորները, եփված էր ծաղկանոցի ծաղիկներից՝ հիրիկից, եղեգից, կիճանոցից, գնուսից: Հիրիկը ծաղիկ է, որ գտնվում է Եթովպիայում, Փիսոն գետի ափին և ունի զորություն, որի հոտից հալածվում են դևերը: Իսկ եղեգը գտնվում է Սինա /լեռան/ վրա. խիստ անուշահոտ է և մարդկանց մեջ հրաշքներ կատարող, ցավեր է բուժում, մամապանդ՝ քոսն ու սուճկը: Եվ կիճանոն ծաղիկը գտնվում է Թերայիդում /Եգիպտոս/. տեսքով շատ սքանչելի է. երբ քնած մարդու սրտի վրա ես դնում՝ նա իր սրտի մեջ եղած ամեն բան պատմում է առանց իմանալու: Եվ եթե ետման ջրի մեջ օգես՝ ամմիջապես սառեցնում է: Ջմուտը Բաբելոնում է գտնվում. հալվելի, խունկի նման է, երբ օծում են մեռյալի մարմինը՝ այն պահում է անապական և անփոտ: Դառն է իբրև լեղի. քացախով կամ գինով տալիս՝ թմբեցնում է:

Անանուն [Օծության յուղի մասին]

- ԺԴ -

Մենք այն ժամանակ բնակվում էինք Սաղմոսավանքի լուսազարդ անապատում, և մեզ կանչեցին Սուրբ Էջմիածին՝ Մեռոնի օրհնությանը [մասնակցելու], և վեր կենալով գնացինք կոչին ընդառաջ [...]:

Եվ այնտեղ էինք /Ռուճվարի 13/ չորս վարդապետներով [...] և այլ բազմամերխս և աշխարհագումար ժողովականներով, բազմաթիվ եպիսկոպոսներով, քահանաներով, կրոնավորներով և ամհամար մարդկանցով ու տաճիկ մեծամեծ իշխաններով, որոնք նկել էին քեմի վրա, սուրբ զոհարանի առջև, յոթնածալ գորգի վրա դրված սուրբ Մեռոնի՝ առանց կրակի և կայծակի սքանչելի

եփումը տեսնելու: Աստվածհայտնության [տոնին ներգվող] «Տնօրինեցաւ» շարակաճի վերջին պահին, երբ հյուսիսի դառնաշունչ հողմը փչեց. և օդի ցրտասառույց խստության պատճառով մեր ատամները կրճտում էին, այնպես տաքացավ Մեռոնը պղնձի հետ միասին, երբ հին Մեռոնի մակարդը [ցրեցին [ճորի] մեջ և խառնեցին Լուսավորչի սուրբ Աջով՝ այն, իրը թոճրի վրա դրված կաթսա, սկսեց եռալ, և գոլորշին վեր բարձրացավ մշուշի մման: Եվ ես սառած ձեռքերս հպեցի [կաթսային] և տաքացա: Եվ տաճիկների մեծավորը, որ դու պ Աղասին էր՝ Տավուք աղա անունով, եկավ փորձելու սուրբ Մեռոնը. իր ձեռքը մոտեցրեց պղնձի կողին. ահա տաքացավ ձեռքը, ինչպես թոճրի վրա [կտաքանար], և շատ զարմանալով՝ ձայնեց ի լուր ամենքի՝ ասելով, թե՛ հավատացի այն ամենին, ինչ լսել էի Մեռոնի մասին: Եվ այլ բազում հրաշքներ եղան [...]:

Գրիգոր Գարանազի, (մոտ 1576-1649), «Ժամանակագրություն», 8 24:

- ԺԵ -

Հայոց աշխարհում են իրենց հայրերի ու մայրերի գերեզմանատները, վանքերն ու ուխտատեղիները, որտեղ սրբերի դամբարաններն են ու մանավանդ մեծահամոզե Աթողը՝ Սուրբ Էջմիածին, ուր գտնվում է Գրիգոր Լուսավորչի սուրբ Աջը, որով օրհնվում է Սուրբ Մեռոնը, որտեղից /Էջմիածնի Մեռոնը/ գճալով սփռվում է ամբողջ աշխարհում ապրող հայրերի մեջ, որտեղ էլ լինեն: Այս պատճառով հայոց ողջ ազգը հնազանդվում է Էջմիածնի Սուրբ Աթողին և նրա կաթողիկոսին, որ նստում է այնտեղ: Եվ այս խոսքերը ասել են ոչ միայն տղան ու անճշան ոմանք, այլ նշանավորներ ու գիտուններ: Այլև ոմանցից լսեցինք, թե մակ այն են ասել, թե շահը կամենում է, որ հայոց ազգը պարսից աշխարհում անխախտ մնա, մա պետք է Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աջը Սպահան քերի և այնտեղ կառուցի մոր Էջմիածին, որ մեռածօրհները լինի և այնտեղ կաթողիկոս նստի, որ հայ ազգը այնտեղ կայունման, մնա, որովհետև Աջի և Էջմիածնի հետ հայոց ողջ ազգն է կապված:

Առաքել Գավրիժեցի (ծն. թ. անհայտ-1670), «Պատմություն»

- ԺԶ -

Եվ այստեղից /Ս. Էջմիածնից/ կենդանարար ջուր և մշտահոս աղբյուր բխեց, այսինքն՝ Սուրբ Հոգու քազմապարզ Զորհքը, որ աստվածագործ Մյուտոնի միջոցով քաշխվում է բոլոր եկեղեցիներին, և հավատացյալների հոգիները նրանով ոռոգված՝ պարարտանում և պտուղ են տալիս: /.../



/.../ Բահանայապետական բոլոր սրբագործությունները Մյուտոնով են նվիրագործվում. ինչպես Եկեղեցի, Սեղան, Խաչ, քահանա և եկեղեցական մնացյալ բոլոր պարագաները Մյուտոնով են օծվում և սրբվում: Այդ պատճառով էլ Եկեղեցու բոլոր խորհուրդների մեջ մկրտությունը և Մյուտոնի օծումը գերադաս են, իրև մնացած բոլորի դուռ և ճանապարհ: /.../

Սիմեոն Երևանցի, «Հարոգ Մյուտոնօրհներ»

[...] Եկեղեցիները Քրիստոսի այգիներն ու պարտեզներն են, և, ինչպես հայտնի է Սուրբ Գրքից, հավատացյալներից յուրաքանչյուրը Քրիստոսին ընծայում է ամուշահամ պտուղներ և տեսակ-տեսակ գեղեցիկ հոգևոր ծաղիկներ, որոնցով ուրախանում է Քրիստոս և փառավորվում հավատքի, բարեգործության և ջերմեռանդ խորհուրդների մեջ: Սակայն նա ունի մեկ աղբյուր և կենդանացնող ջրի մեկ ջրհոր, որ հոսում է Լիբանանից, այսինքն՝ Սուրբ Մեռոնից, որ Սուրբ Էջմիածինն ստանում է Սուրբ Հոգուց, որի շնորհիվ ոռոգվում, դալարում և պտղաբերում են մյուս եկեղեցիները: Նյութական այգիների և պարտեզների մասն սրանք ևս պտղաբերում են իրենց ունեցածը Սուրբ Մյուռոնի ոռոգմամբ, որ քիսում է Սուրբ Էջմիածնից: Այս պատճառով /Սողոմոնը/ ասում է. «Պարտեզների աղբյուր» /ԵՐԳ. Դ 15/, համաձայն այն բանի, թե թուր եկեղեցիները ցանկանում և միշտ կարոտում են Սուրբ Էջմիածնին՝ լիացնողին, զովացնողին և հագեցնողին, ինչպես թուր այգիներն ու պարտեզները՝ աղբյուրին, ինչպես օրինակ՝ հողը, որ ինքնընտանիքյան գոյացնում է տեսակ-տեսակ քույսեր և զամազան ակնեղեն. որտեղի՞ց կարող են լինել դրանք, եթե արեգակը չներգործի: Այսպես էլ ամեն եկեղեցի ու եկեղեցական, որ առաջ են բերում զամազան գործեր՝ և՛ եկեղեցական, և՛ հոգևոր՝ որտեղի՞ց են, եթե ոչ սրբալույս Մեռոնի ներգործությունից, որ ծագում է Սուրբ Էջմիածնից, քանզի մրանից մեզ լույս ծագեց:

Եվ Սուրբ Մեռոնի ամուռը կոչվում է սրբալույս. ո՞ր եկեղեցին շինվեց առանց սրա և ո՞ր ծաղիկ-եկեղեցականը՝ թե՛ բամական և թե՛ ամբան, բուսեց և գործեց եկեղեցականների և եկեղեցիների մեջ առանց սրա [...]:

Այժմ կամենում եմ ասել. Ո՛վ եկեղեցիներ և եկեղեցականներ, ճանաչեք թագուհիների միակ թագուհուն՝ Սուրբ Էջմիածինը, որ Հայոց ազգիս Աթոռն է և Քրիստոսի սիրելին, որ չունեն ուրիշ ազգեր, որոնք երամի են տալիս և գովում նրան, ցանկանում և կարոտում նրան, որին իրենց ծառայությունն են ցույց տալիս թուր եկեղեցիները: Համաձայն Հիսուս փեսայի վճռի, տեսեք և ճանաչեք միակ աղբյուրը և կենդանացնող ջրի միակ ջրհորը՝ Սուրբ Էջմիածինը, որն ամա քաշխում և ոռոգում է ձեզ կենդանարար ջուրը՝ Սուրբ Մեռոնը: Ահա խորհրդավոր արեգակ Սուրբ Էջմիածինը, որն առատորեն ճառագայթում է ձեզ աստվածային լույսը, Սուրբ Մեռոնը, որ լուսավորում է ձեր հոգիներն ու մարմինները: Ուրեմս՝ վաչելեք և շնորհակալ եղեք և իմացեք, թե ումից է այդ շնորհը, Որին փա՛ռք հավիտյանս. Ամեն:

Սիմեոն Երևանցի, «Քարոզ Սուրբ Էջմիածնի և սուրբ Մեռոնի»

1.../ Սուրբ Էջմիածինը թեպետև տարածությամբ հեռու է, սակայն նրա ճառագայթը միշտ ցույց է տալիս իրեն և քարոզում, որ սրբալույս Մեռոնն է: Ինչպես արեգակի ճառագայթն է ծանուցում արեգակի գեղեցկությունն ու օգտակարությունը, ինչի շնորհիվ կառավարվում է երկիրը և դալար մնում, ճիշտ այդպես էլ Սուրբ Մեռոնն է միշտ քարոզում Սուրբ Էջմիածնի օգտակարությունն ու գեղեցկությունը 1.../:

*Սիմեոն Երևանցի (1710-1780, կաթողիկոս 1763-1780),
«Քարոզ Սուրբ Էջմիածնի»*

Կազմեց և աշխարհաբարի վերածեց

ՀԱԿՈՒՔ ԲՅՈՍԵՅԱՆԸ